YEREVAN STATE UNIVERSITY

BOARD OF TRUSTEES

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
СОВЕТ ПОПЕЧИТЕЛЕЙ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ board@ysu.am , www.ysu.am

№ 012 «28» հունիսի 2019 թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝ 2019 թ. հունիսի 28-ին տեղի ունեցած թիվ 12 նիստի

ք. Երևան

Նիստին ներկա էին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 24-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցման ստորագրացուցակը):

ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում օրակարգային 4 հարցով տեղի ունեցավ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի թիվ 12 նիստը: Նիստի սկզբում ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը, ողջունելով ներկաներին, ներկայացրեց օրակարգը, որը քվեարկությամբ հաստատվեց միաձայն:

1. Նիստի օրակարգային առաջին հարցը վերաբերում էր «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019 թ. կառուցվածքում փոփոխություններ կատարելուն: Հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը նշեց, որ դեռևս մայիսի 23-ին ԵՊՀ գիտխորհուրդը հաստատել է ԵՊՀ կառուցվածքում և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու հարցը, որով առաջարկվում է կառուցվածքային մի շարք փոփոխություններ, որոնք առաջարկել էր ԵՊՀ-ում բարեփոխումների հանձնաժողովը:

Գիտխորհրդի կողմից հաստատված փոփոխությունների փաթեթով առաջարկվում է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով ու գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորների հաստիքների վերացում, ապա նրանց գործառույթների մեկտեղմամբ երկու նոր պրոռեկտորների հաստիքների ստեղծում՝ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր ու բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր, որոնք կհամակարգեն իրենց ենթակայության տակ գտնվող ուղղությունների և՛ գիտական, և՛ կրթական գործունեությունը:

Գ. Մուրադյանը նշեց, որ առաջարկվում է նաև վերացնել ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստիքը, քանի որ դրա ենթակայության ներքո այսօր գործող ստորաբաժանումներ չկան: Փոխարենը ստեղծել արտաքին կապերի գծով պրոռեկտորի հաստիք, որը կհամակարգի միջազգային կապերը, արտասահմանյան դրամաշնորհները, հայաստանյան բուհերի, կազմակերպությունների հետ կապերը, ֆոնդահայթայթման գործառույթը:

ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանը հավելեց, որ որոշումն ընդունվել է այն ժամանակ, երբ ինքը գիտխորհրդի անդամ չի եղել, և այսօր որպես ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար՝ առարկություններ ունի: Մասնավորապես նա առաջարկեց, որ արտաքին կապերի գծով պրոռեկտորի հաստիքի փոխարեն ստեղծվի միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստիք:

Գ. Գևորգյանը նշեց, որ առաջարկվող փոփոխություններով նաև որոշ ստորաբաժանումներ, լինելով ռեկտորի և պրոռեկտորների ենթակայությունների ներքո, կտեղափոխվեն այդ հաստիքի ներքո:

Կառուցվածքային փոփոխությունների քննարկման ժամանակ ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ Ա. Աթանեսյանն ասաց, որ համալսարանի դեմ բարձրացված դժգոհությունները պայմանավորված էին ոչ միայն անձերով, այլև աշխատանքի բովանդակության հետ: Նրա հավաստմամբ, կան համալսարանականներ, որոնք իրենց գործունեությամբ ավելի լավ են ապահովում համալսարանի «PR»-ը, քան վարչական ապարատը և առաջարկեց փոխել ստորաբաժանումների կենսաձևը, վերանայել դրանց աշխատանքները:

ՈՒԽ նախագահ Դ. Ափոյանը նշեց, որ կառուցվածքային փոփոխությունները գիտխորհրդի ժամանակ հաստատվել են ընդհանուր փաթեթով՝ առանց առանձին կետերի քննարկման և հաստատման: Նրա փոխանցմամբ, ստորաբաժանումների ղեկավարները տեղյակ չեն եղել փոփոխությունների մասին, և չեն արվել վերլուծություններ: Գ. Մուրադյանն ասաց, որ այս հարցն անցել է իրավական բոլոր ճանապարհներով և նոր միայն հասել Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը, և այսօր մարմինն իրավասու է որոշում կայացնել:

16 կողմ, 0 դեմ, 8 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ Հոգաբարձուների խորհուրդը լուծարեց ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով, միջազգային համագործակցության և գիտական քաղաքականության գծով, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորների հաստիքները և փոխարենը որոշեց ստեղծել հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով, բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով և միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորների հաստիքներ:

Այնուհետև քվեարկության դրվեց ԵՊՀ հաշվապահության վերակազմակերպման հարցը, որի հիմքի վրա կստեղծվեն երկու ստորաբաժանում՝ հաշվապահական և ֆինանսական վարչություններ: Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն ասաց, որ անձամբ ինքը կողմ է այս հարցի հաստատմանը, քանի որ փոփոխությունը միայն դրական արդյունքներ կգրանցի: 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը հաստատվեց:

Կառուցվածքային փոփոխությունների շրջանակում քվեարկության դրվեց ԵՊՀ գնումների և պահեստավորման վարչության վերակազմակերպման հարցը: Հոգաբարձուների խորհուրդը 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հաստատեց ԵՊՀ գնումների և պահեստավորման վարչությունը ԵՊՀ գնումների կազմակերպման վարչության՝ գնումների և պահեստավորման բաժիններով վերակազմակերպելու հարցը:

Հաջորդիվ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը 22 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հաստատեց ԵՊՀ տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունը ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության՝ տեղեկատվական համակարգերի զարգացման և տեխնիկայի և ցանցերի սպասարկման բաժիններով վերակազմակերպելու հարցը: Գ. Մուրադյանը հավելեց, որ այսկերպ ավելի բարձր կլինի պատասխանատվությունը և արդյունավետությունը:

Անցնելով ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների և ձեռներեցության զարգացման կենտրոնների լուծարման հարցին՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն ասաց, որ այս ընթացքում ուսումնասիրել է ուսանողների հետ տարվող աշխատանքների և ձեռներեցության զարգացման կենտրոնների գործառույթները հանգել եզրակացության, որ դրանք իրականացնելու ստորաբաժանումներ արդեն իսկ կան: Ուստի առաջարկվեց քվեարկության դնել դրանք լուծարելու հարցը: Հարցի վերաբերյալ ծավալվեցին քննարկումներ, որոնց արդյունքում առաջարկվեց նաև օրակարգային հարցի այս կետի քննարկումը և հաստատումը տեղափոխել հաջորդ նիստին:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն հարցը դրեց քվեարկության, որի արդյունքում առաջարկությունը չանցավ: 12 կողմ, 12 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ չընդունվեցին այդ երկու կենտրոնները լուծարելու առաջարկությունները: Չընդունվեց նաև ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնին միացնելու առաջարկությունը:

2.«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2018 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվության և տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվության հաստատում: ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն ասաց, որ ԵՊՀ-ում իրականացվում է ֆինանսական աուդիտ, որը ստուգում է, թե արդյոք ճիշտ են կատարվել ֆինանսական գործարքները. «Առաջարկում եմ այսուհետ իրականացնել նաև բովանդակային աուդիտ, որի արդյունքում մեզ կտրվի վերլուծություն ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետության վերաբերյալ»: Նա փաստեց, որ իրականացված վերջին աուդիտի արդյունքները դրական են: Խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը 2018 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվության և տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվության ներկայացման համար խոսքը տրամադրեց ԵՊՀ ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանին: Այն ներկայացնելուց հետո հարցը դրվեց հաստատման: 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ

Որոշվեց.

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 22-րդ կետի 2-րդ, 42-րդ կետի 7-րդ ենթակետերով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4. կետի 7-րդ ենթակետերով՝

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2018 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2018 թվականի եկամուտների և ծախսերի կատարողականի վերաբերյալ հաշվետվության համառոտ տարբերակը հրապարակել www.azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2018 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունը՝ համաձայն հավելված 3-ի:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019 թ. բյուջեում փոփոխություններ կատարելու հարցը: Անցնելով օրակարգային հաջորդ հարցին՝ ԵՊՀ ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը ներկայացրեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019 թ. բյուջեում փոփոխություններ կատարելու հարցը: Նա նշեց, որ դեռևս այս տարվա առաջին նիստին 2019 թ. բյուջեն հաստատվել է 672 մլն դեֆիցիտով և առաջարկեց կատարել նախահաշվի հաստատված ցուցանիշների փոփոխություններ թե՛ մուտքերի և թե՛ ելքերի հոդվածներում: «Եկամտային մասն ավելանում է՝ ի հաշիվ դիմորդների սպասվող թվի ավելացման, պետության կողմից կրթության համար տրվող ֆինանսավորումը մեծացել է: Սպասվում է ավելացում Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայի, մարզասրահների վճարովի ծառայությունների մուտքերից, ուսանողական հանրակացարանի շահագործման վճարներից, քննությունների կազմակերպման ծառայություններից և բանկերում եղած դեպոզիտներից: Բացի դրանից՝ կան ծախսերի նվազումներ»: Նրա տեղեկացմամբ, արդյունքում բյուջեն կլինի պրոֆիցիտային, բայց և առաջարկեց այն նորից դարձնել դեֆիցատային՝ այլ պարտականություններ իրականացնելու համար: Մասնավորապես՝ հանրակացարանը բերել շահագործման տեսքի՝ ձեռք բերելով համապատասխան գույք: Բացի դրանից՝ համալսարանում ջրամատակարարման հարցը լուծելու համար առաջարկվում է ձեռք բերել ջրի նոր բաք: Գ. Գևորգյանի փոխանցմամբ, առաջարկվում է լրացուցիչ և նորարար աշխատանքները խրախուսելու համար սահմանել լրավճարներ. «Մասնավորապես՝ սեպտեմբերի 1-ից որոշ դասընթացներ կկազմակերպվեն «Moodle» էլեկտրոնային ուսուցման համակարգով, և այն դասախոսները, որոնք կօգտագործեն այդ հարթակը, կստանան լրավճարներ»: Բացի դրանից՝ առաջարկվում է ԵՊՀ հիմնադրման 100-ամյակի կապակցությամբ աշխատակիցներին պարգևատրել հիմնական աշխատավարձի 50 %-ի չափով: Հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը հարցը դրեց քվեարկության, որի արդյունքում 24 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ որոշվեց հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019 թ. բյուջեում փոփոխությունները:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հաշվեկշռում գտնվող ՀՀ Արագածոտնի մարզի Անտառամուտ գյուղի տարածքում առկա ԵՊՀ ուսումնաարտադրական բազայի օտարման հարցը: Նիստի օրակարգային վերջին հարցով էլ քննարկվեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հաշվեկշռում գտնվող ՀՀ Արագածոտնի մարզի Անտառամուտ գյուղի տարածքում առկա ԵՊՀ ուսումնաարտադրական բազայի օտարման հարցը, որի վերաբերյալ հնչեցին տարբեր կարծիքներ և առաջարկություններ: Ծավալված քննարկումից հետո առաջարկություն եղավ օրակարգային այս հարցը հետաձգել հաջորդ նիստի: Հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանը հարցը դրեց քվեարկության, որի արդյունքում 23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ որոշվեց «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հաշվեկշռում գտնվող ՀՀ Արագածոտնի մարզի Անտառամուտ գյուղի տարածքում առկա ԵՊՀ ուսումնաարտադրական բազայի օտարման հարցը հետաձգել հաջորդ նիստին:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Գ. Մուրադյանն ամփոփեց Խորհրդի աշխատանքը և նիստը հայտարարեց փակված:

Խորհրդի նախագահ՝ **Գ. Մուրադյան**

Խորհրդի քարտուղար՝ **Ա. Իսրայելյան**